

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի, 2020 N 46

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի հուլիսի 27-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝ **ո Ր Ո Ղ ՈՒ Մ Ե Մ**.

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) «Կոսմետիկա» ՍՊԸ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 5/39 (ՀՎՀՀ 90047239).

2) Ա/Ձ «Բաբուրյան Էռնա», ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 11 (ՀՎՀՀ 90423326).

3) «Կապիտալ» ՓԲԸ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 11/37 (ՀՎՀՀ 90018172):

2. ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐՉՈՅԱՆ